ԵՐԵԿՈ-ՀԱՄԵՐԳ՝ «ԹԻՖԼԻՍ, ԴՈՒ ՄՈՒՍԱ ԵՍ»

Իրական սերը հաստատվում է նաեւ հիշողություններով: Որքան ուժեղ է սերը, այնքան առավել ուժեղ, վեհ ու հիասքանչ են հիշողությունները: Հենց նման տրամադրություն էր տիրում «Թբիլիսոբայի» տոնի շրջանակներում, Վրաստանի կոմպոզիտորների միության, Վրաստանի հայերի միության եւ Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից, կոմպոզիտորների միության փոքր դահլիճում անցկացված «Թիֆլիս, դու մուսա ես» երեկոն: Սույն խորագիրը լրիվությամբ արտահայտում էր երեկոյի գաղափարը, քաղաքի նկատմամբ երիտասարդների սերը եւ ավագ ու միջին սերնդի մարդկանց կարոտը:

Թբիլիսին, որն իր պատմական անցյալով աշխարհի հնագույն քաղաքներից է, աչքի է ընկնում իր յուրահատկություններով, նրան բնորոշ են յուրահատուկ ավանդույթները, բանական ու բարոյական արժեքները եւ, բնականաբար, նաեւ նրա մշակութային հուշարձանները: Քաղաքը դարեր ի վեր եղել է բազում երգահանների, գրողների, բանաստեղծների ու նկարիչների ոգեշնչման աղբյուրը: Հենց այդ մասին միջոցառման իր բացման խոսքում նշեց միջոցառման կազմակերպիչ ու վարող, պրոֆեսոր Ալեքսանդր Պիրադովը: Ժամանակին ճանաչված ինժեներ, տեխնիկական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Պիրադովն արդեն մի քանի տարի է, ինչ զբաղված է մշակութային լուսավորչական գործունեությամբ եւ պարբերաբար կազմակերպում է ցուցահանդեսներ, համերգներ ու երեկոներ, որոնց գլխավոր նպատակը վրաց-հայկական մշակութային հարաբերությունների զարգացումն է ու նոր տեսանկյունից դրանց ցուցադրումը:

Ներկայիս երեկո-համերգի գլխավոր առանցքը թբիլիսահայ բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանի տեքստերի հիման վրա վրաց կոմպոզիտորների կողմից գրված երգերն էին: Եվ, իրոք, համերգին անցկացվեց երգահաններ Գիորգի Շավերզաշվիլու («Սիրով խաղը»), Կախա Ցաբաձեի («Թբիլիսի, քեզ համար»), Անրի Մերաբովի («Դավաճանություն») եւ Վաժա Ազարաշվիլու («Միակը») կողմից գրված չորս նոր երգերի պրեմիերան:

Քաղաքային վոկալի ոճով գրված այդ երգերը կատարեցին Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Հենրիխ Պետրոսյանը, մենակատարներ Էկա Խոշտարիան եւ Վիլլի Գրիգորյանը:

Ճիշտ է, երեկո-համերգի անկյունաքարը նոր երգերի պրեմիերան էր, սակայն երեկոյի կազմակերպիչ Ալեքսանդր Պիրադովի շնորհիվ այն դարձավ ավելի ծավալուն ու հագեցված հետաքրքիր երաժշտական համարներով, որոնք կրկին անգամ ցուցադրեցին այն սերտ կապը, որով դարեր ի վեր կապված են եղել վրաց եւ հայ ժողովուրդները: Համերգին հնչեցին վրաց եւ Վրաստանում ծնված հայ կոմպոզիտորների գործերը, որոնք ունկնդիրներին ներկայացվեցին վրաց եւ հայ կատարողների կողմից:

Համերգին հատուկ այդ նպատակով կազմավորված Մարինա Ասրիեւա (ջութակ¤-Գիորգի Ջորջաձե (թավջութակ¤-Գիորգի Շավերզաշվիլի (դաշնամուր¤ եռյակի կատարմամբ հնչեցին Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետից «Ադաջիոն»: Մարինա Ասրիեւայի վիրտուոզ կատարմամբ հնչեց նաեւ Արամ Խաչատրյանի «Ուզունդարան»:

Երեկո-համերգի ծրագրում նշանակալի տեղ էր հատկացվել վրաց կոմպոզիտորների ստեղծագործություններին: Մասնավորապես՝ Գիորգի Շավերզաշվիլու դաշնամուրային «Պասակալիան» կատարվեց կոմպոզիտորի դստեր, Զ.Փալիաշվիլու անվան կենտրոնական երաժշտական ուսումնարանի սան, Ա.Սկրյաբինի անվան միջազգային մրցույթի առաջին մրցանակի դափնեկիր Էլենե Շավերզաշվիլու կողմից, Օթար Թաքթաքիշվիլու «Պոեման»

1 / 2

ունկնդիրներին ներկայացրեց Զ.Փալիաշվիլու անվան կենտրոնական երաժշտական ուսումնարանի սան, երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթների դափնեկիր Սերգեյ Մարկոսյանը: Վաժա Ազարաշվիլու չորս ձեռքի համար գրված երկու պիեսներով համերգին դաշնամուրային դուետով մասնակցեցին միջազգային մրցույթների դափնեկիրներ Քրիստինա եւ Ռեգինա Մեհրաբովաները: Վիլլի Գրիգորյանի կողմից հրեական «Հավանա գիլա», «Շալոմե» եւ մյուս հանրահայտ երգերի կատարումը առանձնակի ոգեւորություն առաջացրեց դահլիճում, ինչը էլ ավելի աշխուժացավ դաշնակահար Անրի Մեհրաբովի կողմից թբիլիսյան հին մեղեդիների կատարմամբ:
Երեկո-համերգի կիզակետը Վաժա Ազարաշվիլու կողմից բոլորին քաջ հայտնի, իր իսկ երգերի՝ «Օրերն անցնում են», «Երգը իմ ողջ ունեցվածքն է», «Փոքրիկ աղջիկ» կատարումն էր:
Ունկնդիրները տեւական ծափահարություններով իրենց երախտիքն հայտնեցին «Թիֆլիս, դու մուսա ես» միջոցառման կազմակերպիչներին ու մասնակիցներին:
Երեկո-համերգին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, մայրաքաղաքի վրաց եւ հայ արվեստասեր ու երաժշտասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

□□□□ □□□□□□□□□□□